

Մարտ 2, 1978

Արժանաշնորհ
Տ. Արսեն Քնյա. Պարսամեան
Հովհաննես Սակոբ Եկեղեցւոյ
Ոիչմընտ.

Սիրելի Տէր Հայր,

Ստացուած է այն հրաւիրագիրը որով կը ծանուցանէիք համայնքիդ
ծխական ժողովի գումարման թուականը եւ կը ներկայացնէիք ժողովին
օրակարգը:

Հեր սոյն ժողովը տեղի պիտի ունինար Կիրակի, Փետրուար 4ին,
քայց ահա մէկ մաիս անցած է արդէն սակայն Առաջնորդարան չէր
դրկած հետեւեալ սիւթերը.

1. ծխական ժողովին մէջ կատարուած քուէարկութեանց արդիւնքները
2. ծխական ժողովին ներկայցուած տեղեկագիրները
3. ծխական ժողովին ներկայցուած ելեւմտական հաշուելիշիոը
4. Առաջնորդարանէն Զեզի ղրկուած տպագրեալ տեղեկագիրը
5. Համայնքիդ նորընտիր պատգամաւորներու անունը եւ հասցէն

Համեցէք փութով Առաջնորդարան ղրթել սոյն անհրաժեշտ նիւթերը,
որպէսզի Առաջնորդ Սրբազան Հայրը վաւերացնէ ծխական ժողովիդ մէջ
կատարուած ծխական Խոր հուրդի մասնակի ընտրութիւնները:

Խորին յարգանօք

Առւրէն Մանուէլեան
Դիւանապետ